

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Զ. Ն. — Սուգ եւ յարու- թիւն	53
ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ	
ՀԱՅՈՒՆԻ Զ. ՎԱՐԴԱՆ. — Պատմութիւն Հա- յոց Աղօթամատոյցին (Շար.)	58
Hindie Archv. Gr. - Notes liturgiques sur l'Office Arménien (Suite)	86
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՔԻՒՐՏԵԱՆ Յ. — Արամի վանքը Երբ հիմ- նուած է եւ ո՞վ է թաղէս եպիսկոպոս.	68
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ	
ՅՈՎԱԿԻՄԵԱՆ Զ. ԱԼԵՔՍԱՆԴ. — Համառոտ տեղագրութիւն Արարիկի եւ տեսու- թիւն անոր բարբերուն, բարբառին եւ ասածներուն (Շար.)	72
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Գրիչ եւ ծաղկող Յով- հանէս Սանահինցի	79
ՔԻՒՐՏԵԱՆ Յ. — Ողբ Մայրաքաղաքին Կա- ֆայու	83
ԴՐԱԿԱՆ	
ՃԱՆԱՇԵԱՆ Զ. ՄԵՍՐՈՊ. — Օրհնութիւն	89
— Գորշ պատկեր	89
— Երազ	90
ՔԱՅԱՐԵՆՏ ՀՐԱԶ. — Եղբայր իմ, թոյլ տուր	90
ՅՈՎԱԿԻՄԵԱՆ Զ. ՎԱՀԱՆ. — Քու հոգիդ — Կեանքի վայրկեան	91
ԼԵԶՈՒԿԱՆ	
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Զ. Ն. — Ի սէր Մեծա- սփանջին	102
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
ՔԻՒՐՏԵԱՆ Յ. — Արեւմտեան Հայաստա- նում Վ. Ա. Արաբաբեկեանի	92
— Մատենադարանի պարսկերէն հրովար- տակները Զ. Գ. Փափազեանի	94
— Վրաց աղբիւրները Հայաստանի եւ Հա- յոց մասին. Հտ. Գ. Լ. Մելիքեթ Բէկի	95
— Զուարթնոց Արտաշէս Օրագեանի	96
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԶԱԳԱՆԳ.	
*** Արաբաւի ստորոտէն — Էջմիածնի հնու- թիւնները. Պեղումներ Սեւանի շուրջ. Արեւադէպիկի երկարակայան Արարատ- եան դաշտին մէջ. Հեռառեւիլ Երեւանի մէջ	97
*** Զուլաւաճար Մանուկ Բարեթեան Կ. Ղազարու մէջ	103

SOMMAIRE

ARTICLE DE FOND	PAGE
Der Nersessian P. N. - Deuil et résurrection	53
LITURGIE	
Hatsouni P. Vardan - Histoire du Bréviaire Arménien (Suite)	58
Hindie Archv. Gr. - Notes liturgiques sur l'Office Arménien (Suite)	86
HISTOIRE	
Kurdian H. - La date de la fondation du monastère d'Armache et la personnalité de l'évêque Thadée	68
ETHNOLOGIE	
Hovsepian P. Alexis - Brève topographie d'Arabkère et aperçu sur ses moeurs, sur son dialecte et ses dictons (Suite)	72
PHILOLOGIE	
Yeremian Aram - Jean de Sanahine, le scribe et le miniaturiste	79
Kurdian H. - Elégie sur la ville de Kafa	83
LITTERATURE	
Djonashian P. Mesrob - Bénédiction	89
» » - Image sombre	89
» » - Songe	90
Khatcharentz Hratch - Mon frère, permet- tez-moi !	90
Hochannesian P. Vahan - Ton âme	91
» » - Un instant de la vie	91
LINGUISTIQUE	
Der Nersessian P. N. - Pour l'amour de la «Toute Merveilleuse» (langue arménienne)	102
RECENSIONS	
Kurdian H. - «Les Arts en Arménie» de V. A. Abrahamian	92
— Les édits en langue persane de la Biblio- thèque des Manuscrits de H. D. Pa- pazian	94
— «Les sources géorgiennes sur l'Arménie et les Arméniens» vol. III, de L. Mel- kiset Beg	95
— «L'église de Zvartnotz» d'Artachès Orakian	96
ECHO ARMENIEN	
*** - Aux pieds de l'Ararat - Les antiqui- tés d'Echmiadzine - Les fouilles au- tour de Sévan - Les découvertes de Karmir Blour - Une centrale héli- électrique dans la plaine d'Ararat - La télévision à Erivan	97
*** - Le violoniste Manouk Parikian à St. Lazare	100



1843 ~ 1957
ՃԺԵ. ՏԱՐԻ

ԹԻՒ 3-4

ՄԱՐՏ - ԱՊՐԷԼ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXV^e année, 1957, N. 3-4 Mars - Avril

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒԳ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Զիւնը կը հալի, ծիծեռնակները համ-
բոյր կու տան մեր երգիքներուն, բնու-
թիւնը նոր հարսի նման վը ծաղկի, մինչ
ձմեռ է տակաւին մեր հայ իրականութեան
մէջ: Քամին կը փչէ սարսուղին, կը տա-
պալէ հսկայ կաղնիներ, մահուան ստուե-
րը կը թափառի աստանդական եւ կը սո-
ղոսի մեր սեմերէն, մեր աղումբներէն,
մեր խմբադրատուններէն, մեր դպրոցնե-
րէն ներս, ու կը հնձէ, կը հնձէ անվերջ:
Ամէն ամիս իր սուգն ունի. մեր օրա-
թերթերը դարձեալ սեւ կը հաղուին, նոր
կորուստ մը վը դուժեն, անհետացող հըս-
կայի մը դաղաղին ետեւէն կու լան: Այս
ի՞նչ չարաչուք ձմեռ է որ կ'երկարի:
Փարոսներն են որ կը մարին հետզհետէ.
զրքի տխրաններն են որ կ'իյնան յաջոր-
դաբար, անդնդային պարապ մը ձգելով
իրենց ետեւ: Արեւելքէն արեւմուտք, մաս-
նաւորապէս Եւրոպայի եւ Մերձաւոր Արե-
ւելքի մէջ կը հնչէ ահազանգը, ահաւոր
աղէտ սպառնալով մեր ազգային մշակոյ-
թին:
Թուելու համար քանի մը անուններ,
սկսելով մեզի մօտիկ Ֆրանսայէն, ո՞վ չի

նշմարել այդ զիսաւորներուն անհետացու-
մով ստեղծուած հսկայ տաղանապը. յա-
ւէտ լուծ են Ահարոնեան, Զօպանեան, եւ
նոյն դամբանային լուսթեան մէջ կը քա-
րանան հիմա Շահան Պէրպէրեան, Շաւարշ
Միսաքեան. զրազէտը, զեղարուեստագէ-
տը, աննման ուսուցիչը, անզուգական
հրապարակագիրը:
Անդին դեռ թարմ են հողակոյտերը Աղ-
բալեանին, Շանթին, Գարեգին Կաթողի-
կոս Յովսէփեանցին: Զենք մոռցած այն
խանդավառութիւնը՝ որով ծայր տուաւ
Զեռազրաց Յիշատակարաններու տպա-
գրութեան մեծղի գործը, շողարձակ խոս-
տումներով. բայց այսօր, հինգ տարի ան-
ցած, հաղիւ կը խօսուի անոնց մասին:
Փարաւոններու աւաղին վրայ ալ ջարդ
մը կայ. վերջինն անոնցմէ Նաւասարդ-
եանն էր, որուն մահով փարոս մըն ալ
մարեցաւ Միջերկրականի ափերուն վրայ:
Մասիսի ստորոտն ալ կը փչէ բուքը.
Դերենիկ Դեմիրճեան զոհն է թարմ, հայ
պանթէոնին բազինին վրայ բարձրացած:
Իսկ այս վերջին տառնամակին՝ ո՞րքան
կորուստներ. Աճառեան, Մանանդեան,

Մարխասեան եւ Արեղեան հսկայ տիտաններն էին հայ բանասիրութեան, որոնք վըրտեն ընդ միշտ:

Սուգի դրօշը պարզուեցաւ նաեւ Մխիթարեան յարկին վրայ. լուսահոգի Հ. Սահակ Վրդ. Տէր Մովսէսեանի թաղումին, դեռ երէկ, կրկնուեցաւ մեր կսկիծը՝ Թոմասեաններու, Հացունիներու, Աւգերեաններու, Թորոսեաններու եւ Ղազիկեաններու շիրիմներուն ի տես:

Արցունքն ու սարսուռը չի թողուր որ աւելի մանրամասնեք մեր թուարկումը Ատրանդեանի ամբիշն անդին, իւրաքանչիւր երկրէ եւ իւրաքանչիւր քաղաքէ ներս, ուր անպակաս է ողբը հսկայի մը ետեւէն:

Ողբերգութիւն մը համազգային...:

Իսկ ի՞նչ կը խորհնք մենք մնացողներս, մեր դրական ու հայադիտական հսկաներու մեռելական թափօրին մասնակցողներս վշտահար: Ամէն անգամ երբ կը լսենք տըխուր գանգին հեծկտուքները, Դուրեանի «Թրթուռն ծիծաղն մահու դժխեմ», զնահատանքի եւ երախտագիտութեան շունչ մըն է որ կը փոթորկի մեր հոգիներուն մէջ. ամէն հսկայի հոգեվարի պահուն, անոնց հոգիէն մասնիկ մը՝ կարծես՝ կ'արծարծի մեր մէջ. ու կը յորդին դամբանականներ տեղատարափ, յարգանքի բիւրծաղիկներով ընդելուզուած: Մեռելական խոր թմբիւրէն կը յառնէ դարձեալ Թումկարերդի իմաստուն աշուղը, անմահական դովքն հիւսելու անհետացող տիտանին: Եւ անոնց դադաղին առջեւ կը փառաբանենք անոնց անմահութիւնը. անմահութիւն՝ հայ մշակոյթի դարաւոր պատմութեան մէջ, անմահութիւն՝ մեր իսկ սըրտերուն մէջ: Մեր լրագիրներն ու գրական թերթերը փառքի բաղինին վրայ կը բարձրացնեն դանոնք եւ անմահութեան դափնեպսակը կը գետեղեն անոնց ճակատին, մինչ հոգին կը յանձնուի անմահներու դադաղը:

Անմահներու դադաղ... ո՛հ, ի՞նչ ահաւոր հակասութիւն: «Կը թաղուի՞ միթէ

ճառագայթը», պիտի դռէր Դուրեանը վաղամեռիկ, կարելի՞ է միթէ սեւ պատանքի մէջ փաթթել լոյսը զուարթածաղիկ: Չէ՞ որ անոնք իրենց կենդանութեան՝ վառ պահեցին ազգային ջահը, եւ իրրեւ քրմապետներ Վահագնեան հուրին, անոր առկաջ նշոյլները բաշխեցին հազարաւոր տերունիներու. ա՛յն սրբազան լոյսին, զոր Լուսաւորիչը մեր հայ աշխարհին փոխակերպեց քրիստոնէական հրդեհին, եւ Մեսրոպ յաւերժացուց՝ Արարատի հրաբորբը դմբէթին հաւասար:

Ու մենք՝ իբր կարծրասիրտ մեռելաթաղներ, ի՞նչպէս ցուրտ դամբանի խաւարին կրնանք յանձնել լոյսի այդ դաւակները:

Աւա՛ղ. չենք կարող կասեցնել բնութեան անխորտակելի օրէնքը, աշխարհի կանոնը հաղարամեայ: Բայց վրնանք յաւերժացնել անհետացող հսկաները, վերապրեցնել անոնց յիշատակը, ապահովել անոնց երկրաւոր անմահութիւնը. կերպով մը յարութիւն տալ անոնց:

Ունայն ցնորքներ են, ինքնախաբէութիւն, սոսկ ձեւակերպութիւն, այն բոլոր յարգանքի ցոյցերն ու շօնադր, եթէ անմահներու դադաղին առջեւ չտանք խոստում մը անդրժեղի, երդում մը վեհանձն՝ մեր իսկ գործով անմահացնելու անոնց յիշատակը:

«Կ'ուզէ՞ք որ հանգուցեալին հոգին այժմ չխռովի — պիտի ըսէր Պետրոս Դուրեան — իր կտակն ու իր յիշատակը ձեզի կը թողու. դուք, որ իր բարեկամներն էք, առաջ տարէք իր տկամ գործը, եթէ զինքը կը սիրէք»:

Կտակ մը եւ խոստում մը, ուրեմն. ահա՛ մեր սրբազան ողբերգութեան երկու արարները:

Կտակը՝ գործն է այն հսկաներուն, կըտակը՝ կենքն իսկ է այն հսկաներուն, որ ուրիշ բան չեղաւ՝ բայց եթէ մշտական զոհադրոծում մը հայ մշակոյթին: Ու մենք լաւ գիտենք խնկաւէտել այս վտակը: Բայց կայ նաեւ երկրորդ մասը. մերի-

նը. եւ այդ արարին դերակատարները մենք պիտի ըլլանք, մնացողներս, բոլորս անխտիր, մեռելական թափօրին մասնակցողներս վշտահար:

Ի՞նչ օգուտ, երբ մեր թերացումով կամ անհոգութեամբ՝ ուժանանք, հեռանանք անոնց դադափարականէն եւ օտարանանք: Ի՞նչ օգուտ անոնց անմահութենէն, երբ մեր մէջ մարի ու եղծանի հայուն ճշմարիտ պատկերը: Մեզի հետ անոնք ալ յաւէտ պիտի մեռնին: Աւելին. մենք եղած պիտի ըլլանք անոնց դահլճները. անոնց երկրաւոր անմահութեան անգութ դահլճները: Ոճիրներուն ամէնէն ահաւորը. տեսակ մը ազգասպանութիւն, ազգային ինքնասպանութիւն:

Մինչ ուսամբարձ գերեզման կ'առաջնորդենք հսկայի մը դադաղը, խորհնք այն ծանր պարտականութեան վրայ որ կ'իյնայ մեր հոգեկան ուսերուն վրայ. մեր հերոսը հոգին յանձնելու պահուն՝ խորհնք դայն վերապրեցնելու դանազան կերպերուն վրայ, ստեղծելու համար այն հրաշալի յարութիւնը՝ որ միակ գրաւահանն է մեր յաւերժութեան: Այն ատեն միայն այդ հսկաներուն արժանաւոր յաջորդները կրնանք ըլլալ, եւ անոնք՝ մեր պարծանքը յաւերժական:

Երբ անտառէն փոթորիկը խլէ հաստարմատ եւ երկնաբերձ մայրիկներ, անտառապահը այնքան չի տխրի՝ եթէ ունի անոնց յաջորդներ: Հայ պանթէոնին զըմբէթն ալ չի փլիւր, երբ սիւնի մը անհետանալու պահուն՝ ուրիշ մը անցնի անոր տեղը բռնելու: Ուրիշ խօսքով, պահակներն են որ կը փոխուին. գործը կը տեւէ. ու պէտք է որ տեւէ:

—0—0—0—

Ապրիլեան նուիրական յիշատակ մը կու գայ մեզի տկնայատ պարգելու սուգի եւ յարութեան այս խորհուրդը: Մեծն Մխիթարի եւ անոր ազգանուէր յաջորդներու պայծառ օրինակն է այդ, 250ամեայ անխոնջ վաստակի մը հզօր պարտադրանքով:

1749, Ապրիլ 27: Առաջին մեծ սուգը կը պատէր Ս. Ղազարի կղզեակը. վանքին կամարներուն տակ, շարականներու եւ խունկի ամպի մէջ փաթթուած՝ դամբան կ'իջնէր անմահ ԼՈՒՍԱՆՈՐՈԳԸ, որ վառեց վերածնունդի ջահը բոցարծարծ: Այդ խորհրդաւոր պահուն, անմահ Սերաստացիին շիրմին առջեւ ծնրադիր, ուխտ մը կնքեցին անոր հարազատ աշակերտները. ուխտ մը՝ շարունակելու անոր գործը, անմահացնելու անոր յիշատակը: Եւ այսօր, երկու դար վերջ, եթէ ուզենք բանաձեւել այդ հսկայ գործը, պիտի ըսենք թէ ան ուրիշ բան չէ, բայց եթէ տեւական յարութիւնը Մեծն Մխիթարի լուսաւոր դէմքին՝ յանձին երեք հարիւր յիսուն միաբաններու, որոնք ձգտեցան միեւնոյն սուրբ դադափարականին: Սուգի եւ արցունքի տակ չճնշուեցան անոնք: Մխիթարի շիրմաքարը տակաւին էր փակուած, երբ արդէն կը ճռնէին տպագրական մամուլները, օր առաջ լոյս ընծայելու Հայկազեան Բաղգիրքի առաջին հատորը. եւ յաջորդ տարին՝ երկրորդ հատորը, նոյնքան հաստափոր: Ահա ազգային՝ մըշտօտեւ յարութեան, անխոնջ կենսունակութեան գերազանց օրինակը:

Երեւակայենք պահ մը, որ Մխիթարի մահէն վերջ՝ պակսէր իր յաջորդներուն մէջ այն վորոյն ու նուիրումը. այսօր ի՞նչ պիտի ունենայինք Մեծն Մխիթարէն. կիսափուլ վանք մը անշուշտ. ուր, պիտի ընէին, ժամանակին փորձ մըն են ըրեր վեհապետական խորհրդակցական հայ սրբութիւնները, հայ գիրն ու գրականութիւնը. թերեւս... այդ ալ ըսողներ չգտնուէին:

Ու Մխիթարի գաւառները իսկապէս առաջ տարին Հիմնադրին գործը: Քերականութիւններ, Հայկազեան Նոր Բառարանը, Ն ա խ ն ե ա ջ Մատենագրութեան շարքեր, մեծագիր, փոքրագիր, պատմական ու բանասիրական հրատարակութիւններ, քերթողական նուագներ, հետզհետէ յայտնուեցան վերածնունդի հորիզոնին վրայ, ստեղծելով Մխիթարեան գործու-

նշույթեան մեծ գիտաւորը: Եւ Մխիթարի դէմքը ցոլաց յաւերժօրէն հայ իրականութեան վրայ, վերարծարծելով ամբողջ ազգը, ափիւռքի եւ մայր հայրենիքի մէջ:

Մահուան եւ անմահութեան այս հակընդդէմ խորհուրդը մեզ վրէժնի մինչեւ անցեալի այն երեւակայեալ ու խորհրդաւոր անտառը, ուր, լուսնի լոյսերով ողորուն, սլացաւ երբեմն Եղիշէ Չարենց՝ Տանթէի առաջնորդութեամբ. «մահուան տեսիլ» մըն էր, անմահական տողերով արձանագրուած: Կը հանդիպին ծերունիի մը, հսկայ մօրուքով, ճակատին պըսակ, եւ ձեռքին մէջ արծաթէ տաւիղ մը բռնած: Ուրուական մը վը թուի իրենց. բայց ծերունին խօսք ուղղելով Տանթէի, կ'ըսէ.

- Վարպետ, ո՛հ, ես էլ քեզ նման մի գիշեր աշխարհից անցայ, Ապրեցի իբրեւ վանական, հայրենի եգերֆում քո ծովի. Բայց չքնաղ հայրենիք քո՝ ինձ համար հայրենիք չդարձաւ, եւ ծովը ձեր այն ծիծաղկուն չքուծեց իմ սիրտը ցաւից:

Աշխարհում շաշոյ հողմերից այն կոզում ապաստան գտած, Զգեցած անասն ախմ՝ ես տաւիղը սակայն սիրեցի. եւ տաւիղը շեփոք դարձրած՝ քերթութեան պարտեզը մտայ, Որ կորած հայրենիքս երգեմ եւ անցեալը նրա հրածին:

Երգեցի ես ձայնով առնական ամրոցներն ու բերդերը հայոց, Ոտանները հայոց արքայից, պալատները նոցա փառահեղ. Երգեցի կարմիր Աւարայրը, Մասիսը աստղերին ռայոյ, Զգտելով հին փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել:...

(Գիրք ձանապարհի, Երեւան, 1933, էջ 71)

Այդ խորհրդաւոր ծերունին Հ. Ալիշանն է. բայց իր խորքին մէջ կը համադրէ Մխիթարի եւ անոր հետեւորդներուն դործը եւ սուրբ զաղափարականը. վերապրեցնել հին հայրենիքը, ըստ Նահապետին՝ «մոռցուած հայրենիքը»:

Այո՛. Աղբիւսականի ափերուն վրայ թաւած այդ կղզեակը դարձաւ հայ հայրենիք մը օտարութեան մէջ, ուր հսկեցին բոլոր սուրբերը հայոց աշխարհի, ուր իջաւ Մասիսի սիւքը կաղզուրիչ: Հին հայրենիքը վերակենդանացաւ այնտեղ: Չամչեանի եւ ռահատոր Հայոց Պատմութիւնը, Ինձի-ձեանի Հնախօսութիւնը, Աւգերեանի Վը-կայաբանութիւնները, Հ. Ներսէս Սարգիսեանի Ուղեգրութիւնները, Բազրատունիի Հայկ Դիւցազնը, Նահապետին մանաւանդ աղօթք դարձած երգերը հրաշունչ եկան դիպուցան իբրեւ մի նոր լեռն Մասիս: Հաղարատը ձեռագիրներ, հաւաքուած դանխուլ անկիւններէ եւ հայրենի աւերակներուն տակէն նոյնպէս եկան դիպուցան, եւ երբեմնի բորոտներու անկե-լանոցը՝ դարձաւ տաճար հայ մտքի եւ հանճարի: Սեւանն ու Վանը ցոլացին այդ հայրենասէր վանականներու աչքերուն մէջ՝ վերածաղկած եւ ազատ մեծ հայրենիքի չքնաղ ւերադով:

Մխիթարի ոգին էր որ կը վերածնէր անկերջ: Հրաշալի՛ յարութիւն:

Եւ այսօր, այն թուականէն 208 տարի վերջ, անդամ մըն ալ կը կրկնենք մեր ուխտը՝ հաւատարիմ մնալու Մեծն Մխիթարի աւանդած կտակին, հաւատարիմ մնալու անոր յաջորդներուն ժիր դործունէութեան եւ հսկայ օրինակին: Թող սաւանի՛ր այդ մշտանորոգ ոգին Ս. Ղազարի կամարներէն մինչեւ ամէնէն հեռաւոր անկիւնը աշխարհի, ուր հայ սիրտ մը կը բարախէ, մէկ զաղափարականի տակ ձուլելու ազգը ամբողջ:

-0-0-0-

Ծուռնի մըն ալ աղօթք եւ խունկ մը սըր-տագին՝ յիշատակին առջեւ այն անմահ-

ներուն, որոնք... աւա՛ղ, զաղաղ մ'իսկ չունեցան. ա'յն հսկաներուն՝ որոնց ոսկորները թափառող ալիքներու հետ ան-յայտացան, ջրհորներու մէջ ալիքացան, ա-նապատի աւազին վրայ չքացան. ա'յն հե-րոսներուն՝ որոնց արիւնը խառնուեցաւ Գողգոթայի աստուածային աննման Զո-հին հետ, ստեղծելով մեր Զատիկը սար-սոստեսակ:

Յարգա՛նք անոնց սուրբ յիշատակին:

Բայց մինչ արդարօրէն կ'ողբանք մեր նահատակները, դիտնանք այս պարադա-յին ալ լրջօրէն դործնականացնել մեր սու-ղը, եւ անմահութեան հուրով նուիրակա-նացնել դայն: Զլճանանք ողորակո՞ւ ծո-վին մէջ, որ յանկարծ կը փոթորկի վրէժի ու բողոքի յորձանքներով. չդոհանանք, այսպէս ըսենք, Ապրիլեան յանկերգներով: Այլ դիտնանք վերապրեցնել վարդասիրեւ արիւնը մեր քաջարի Նահատակներուն՝ զարնանային հրափառ ծաղիկներուն քով, մեր սրտերուն մէջ:

Քրիստոնեայ նահատակը չի սիրեր սու-ղը. վասնզի իր մահը անմահութիւն է, յաղթանակի դափնիննրով չքեղազարդ-ուած, լուսեղէն պսակներով յաւերժա-ցած: Բայց այդ անմահութիւնը երկրիս վրայ՝ կախում ունի մեր զործելակերպէն:

Գիտնանք, ուրեմն, վերապրեցնել զանոնք մեր մէջ. վերընծիւղենք մեր մէջ անոնց զգացումները, անոնց սէրը դէպի կրօնքն ու հայրենիքը, դէպի մշակոյթն ու մեր ցեղային արժէքները:

Մեր անթիւ Նահատակներուն, Ապրիլ-եան Նահատակներուն ամբիժ արիւնը, մեր դիւցազն կոյսերու շուշանափայլ զոհը թող ամբացնէ մեր ուխտը, զոր անդամ մըն ալ կը կրկնենք՝ ոգեւին փարելու իրենց դա-զափարականին:

Մեր հայրերուն իսկ արիւնով ներկուած է այս ուխտը. ատիկա է մեր բաժինն ու մեծ հարստութիւնը, զոր չէ կարելի գըտ-նել ուրիշ որեւէ ազգի մօտ, ինչքան ալ հօր ու աշխարհածաւալ ըլլայ ան:

Այդ ուխտը այն ազնուական հունան է, որ պիտի ծլի ու ծաղկի օր մը մշտատեւ կենսոսնակութեամբ՝ մեր հայկական Զա-տիկին հետ, մեր հայկական դարունին հետ, հորիզոնէ հորիզոն, ճշմարիտ խա-ղաղութեան չքնաղ ծիածանին տակ:

Եւ այն ատեն յարութիւն պիտի առնէ մեր հինաւորեց Նահապետը, անմահու-թեան խորհուրդին ալեւոր պատդամա-տուն, աւետելու հանուր աշխարհի՝ թէ իսկապէս հասած է դարունն Հայոց աշ-խարհի:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ